Հավելված N 1
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Կ Ա Ր Գ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումների և պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների անհատական իրավական ակտերի հիման վրա օտարերկրյա պետություններ գործուղումների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման հիման վրա իրականացվում են՝

1) Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի, Անվտանգության խորհրդի քարտուղարի, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի, Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի, Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի, պետական կառավարման համակարգի մարմնի ղեկավարի (բացառությամբ կառավարությանը ենթակա տեսչական մարմնի և նախարարությանը ենթակա մարմնի ղեկավարի) գործուղումները օտարերկրյա պետություն.

2) միջպետական և միջկառավարական համագործակցության շրջանակներում կազմակերպվող հանդիպումներին, նիստերին, միջազգային նշանակության այլ միջոցառումներին մասնակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնող պատվիրակության գործուղումը: Գործուղվող

պատվիրակության կազմը սահմանվում է օտարերկրյա պետություն պատվիրակություն գործուղելու մասին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

3. Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման հիման վրա օտարերկրյա պետություն գործուղվելու դեպքում՝

1) գործուղման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծը գործուղման մեկնելուց առնվազն 10 աշխատանքային օր առաջ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ սույն կարգի 11-րդ կետին համապատասխան Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ համաձայնեցնելուց հետո.

2) գործուղման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագծին կից ներկայացվում են՝

ա. գործուղման հրավերը, դրա թարգմանությունը, միջոցառման օրակարգը, հիմնավորումներ մասնակցության անհրաժեշտության, մասնակցությունից ակնկալվող արդյունքների և միջոցառմանը չմասնակցելու պարագայում՝ բացասական ազդեցության մասին,

բ. սույն կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետների պահպանման անհնարինության դեպքում՝ հիմնավորումներ գործուղման ժամկետների մասին,

գ. սույն կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պատվիրակության գործուղման դեպքում՝ հիմնավորումներ պատվիրակության կազմի և պատվիրակության կազմում ընդգրկված յուրաքանչյուր անդամի դերակատարության մասին,

դ. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության համաձայնությունը հաստատող գրությունը.

3) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը գործուղման վերաբերյալ որոշման նախագծի փաթեթը նախապատրաստում և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանը: Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից գործուղումը ոչ նպատակահարմար համարվելու դեպքում՝ այդ մասին գրավոր տեղեկացվում է համապատասխան մարմնի ղեկավարին.

4) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացվող Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագծերում պաշտոնական գործուղումների համար նախատեսվում է ոչ ավելի, քան 3 օր, իսկ առանձին դեպքերում գործուղման ժամկետների վերաբերյալ ողջամիտ հիմնավորումների առկայության դեպքում, այդ թվում՝ գործուղման օրակարգով պայմանավորված կամ մեկ ուղղությամբ 8 ժամից ավելի տևողությամբ ճամփորդության դեպքում՝ 5 օր.

5) գործուղումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո:

4. Բացառիկ կարևորության դեպքերում սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված անձանց օտարերկրյա պետություններ գործուղումները կարող են իրականացվել Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից բանավոր համաձայնության պարագայում՝ նախքան համապատասխան որոշման ընդունումը:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա տեսչական մարմնի ղեկավարի և նրա ղեկավարած պատվիրակության գործուղումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի անհատական իրավական ակտի հիման վրա:

6. Նախարարությանը ենթակա մարմնի ղեկավարի և նրա ղեկավարած պատվիրակության գործուղումն իրականացվում է ըստ ենթակայության՝ տվյալ ոլորտը համակարգող նախարարի անհատական իրավական ակտի հիման վրա:

7. Մարզպետի և նրա ղեկավարած պատվիրակության գործուղումն իրականացվում է տարածքային կառավարման բնագավառում քաղաքականության մշակման և իրականացման համար պատասխանատու նախարարի անհատական իրավական ակտի հիման վրա:

8. Սույն կարգի 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով սահմանված գործուղումների վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով գործուղման մեկնելուց առնվազն 10 աշխատանքային օր առաջ համապատասխան գործուղող մարմնի ղեկավարին են

ներկայացվում գործուղման վերաբերյալ առաջարկությունը և հիմնավորող փաստաթղթերը, այդ թվում՝ հրավերը, դրա թարգմանությունը, միջոցառման օրակարգը, հիմնավորումներ մասնակցության անհրաժեշտության, գործուղման ժամկետների, մասնակցությունից ակնկալվող արդյունքների և միջոցառմանը չմասնակցելու պարագայում՝ բացասական ազդեցության մասին, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության համաձայնությունը հաստատող գրությունը, ինչպես նաև պատվիրակության գործուղման դեպքում՝ հիմնավորումներ պատվիրակության կազմի և պատվիրակության կազմում ընդգրկված յուրաքանչյուր անդամի դերակատարության մասին:

9. Պետական կառավարման համակարգի մարմիններում պաշտոն զբաղեցնող այլ անձանց օտարերկրյա պետություն գործուղումն իրականացվում է գործուղող մարմնի ղեկավարի կամ գլխավոր քարտուղարի (աշխատակազմի ղեկավարի) անհատական իրավական ակտի հիման վրա: Գործուղումն իրականացվում է սույն կարգի 11-րդ կետին համապատասխան Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ համաձայնեցնելուց հետո:

10. Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ կամ պետական կառավարման համակարգի մարմնի ղեկավարի անհատական իրավական ակտի հիման վրա՝ առանձին հանրային նշանակության հարցերով կամ պետական նշանակության այցերով օտարերկրյա պետություններ կարող են գործուղվել պետական կառավարման համակարգի մարմիններում պետական պաշտոն, պետական ծառայության կամ այլ պաշտոն չզբաղեցնող անձինք: Պետական կառավարման համակարգի մարմնի ղեկավարի կողմից համապատասխան մարմնում պետական պաշտոն, պետական ծառայության կամ այլ պաշտոն չզբաղեցնող անձի գործուղման առաջարկությունը, գործուղվող անձի թեկնածությունը, գործուղման նպատակը, ժամկետները և գործուղման հետ կապված այլ մանրամասներ գործուղման մեկնելուց առնվազն 10 աշխատանքային օր առաջ համաձայնեցման նպատակով ներկայացվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ համաձայնեցնելուց հետո:

11. Սույն կարգով նախատեսված օտարերկրյա պետություններ գործուղումների վերաբերյալ առաջարկությունները նախապես համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում, Հայաստանի Հանրապետության արտաքին հետախուզության ծառայությունում և Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայությունում պաշտոն զբաղեցնող անձանց գործուղումների՝ ծառայողական առանձնահատկություններով պայմանավորված: Օտարերկրյա պետություններ գործուղումների վերաբերյալ առաջարկությունները Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն են ներկայացվում գործուղման մեկնելուց առնվազն 15 աշխատանքային օր առաջ: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը գործուղման վերաբերյալ առաջարկությունը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում իր գրավոր դիրքորոշումը տրամադրում է համապատասխան մարմնին:

12. Սույն կարգին համապատասխան իրականացված օտարերկրյա պետություն գործուղումից վերադառնալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը՝ համաձայն N 2 հավելվածի, ներկայացվում է գործուղող մարմին և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն՝ սույն կարգի 11-րդ կետին համապատասխան համաձայնեցված գործուղում իրականացնելու դեպքում, իսկ Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ գործուղվելու դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ: Սույն կարգի 4-րդ կետի համաձայն իրականացված գործուղումից վերադառնալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ բանավոր կամ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ N 2 հավելվածով հաստատված ձևաչափին համապատասխան:

13. Սույն կարգին համապատասխան իրականացված օտարերկրյա պետություններ գործուղումների ծախսերի վերջնահաշվարկի մասին հաշվետվությունը, համաձայն N 3 հավելվածի, ներկայացվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, իսկ Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ գործուղվելու դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը, Հայաստանի Հանրապետության արտաքին հետախուզության ծառայությունը, Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայությունը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն են ներկայացնում հաշվետու եռամսյակի ընթացքում օտարերկրյա պետություններ գործուղման ծախսերի վերաբերյալ ամփոփ հաշվետվություն՝ համաձայն N 4 հավելվածի:

14. Սույն կարգին համապատասխան իրականացված օտարերկրյա պետություններ գործուղումների հետ կապված ծախսերի հատուցումը պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվում է համապատասխան մարմնի կողմից՝ պետական բյուջեով տվյալ մարմնին հատկացված միջոցների հաշվին:

15. Սույն կարգով նախատեսված պետական կառավարման համակարգի մարմիններում պետական պաշտոն, պետական ծառայության կամ այլ պաշտոն զբաղեցնող անձանց գործուղումների հետ կապված ծախսերի հատուցումը պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգին համապատասխան:

16. Սույն կարգի 10-րդ կետով նախատեսված պետական կառավարման համակարգի մարմիններում պետական պաշտոն, պետական ծառայության կամ այլ պաշտոն չզբաղեցնող անձանց՝ օտարերկրյա պետություններ գործուղումների հետ կապված ծախսերի հատուցումը պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվում է գործուղող մարմնի կողմից՝ գործուղման ծախսերը հաստատող

փաստաթղթերի հիման վրա: Հատուցման ենթակա ծախսերի հաշվարկման համար կիրառվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգի՝ ծախսերի հաշվարկման վերաբերյալ կարգավորումները, այդ թվում՝ կարգի 7.1-ին կետով սահմանված կարգով հրապարակված՝ Օտարերկրյա պետություններ գործուղվող աշխատողների գործուղման ծախսերի չափերի ցանկը:

17. Սույն կարգի 13-րդ կետին համապատասխան ներկայացված հաշվետվությունները հաշվառվում և ամփոփվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված արտասահմանյան գործուղումների ծախսերի ամփոփ հաշվետվությունները՝ ըստ եռամսյակների և ըստ բյուջետային գլխավոր կարգադրիչների, յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում հրապարակվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կայքէջում, ինչպես նաև ներկայացվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ ի տնօրինություն:

18. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը հաշվետվությունը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության www.e-gov.am կայքէջի «Գործուղումների հաշվետվություններ» բաժնում հրապարակում է սույն կարգի 2-րդ կետին համապատասխան գործուղված անձանց կողմից համաձայն NN 2 և 3 հավելվածների Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացված հաշվետվությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվետվությունը պարունակում է պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնի տեղեկություններ:

19. Գործուղող մարմինը հաշվետվություններն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում իր պաշտոնական կայքէջում հրապարակում է սույն կարգին համապատասխան գործուղված անձանց կողմից համաձայն NN 2 և 3 հավելվածների ներկայացված հաշվետվությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ

հաշվետվությունը պարունակում է պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնի տեղեկություններ:

20. Սույն կարգի 18-րդ և 19-րդ կետերում նշված՝ հրապարակման ոչ ենթակա տեղեկություններ պարունակելու դեպքում՝ ներկայացնողի կողմից հաշվետվության առաջին էջի վերևի մասի աջ անկյունում նշվում է «Հրապարակման ենթակա չէ» գրառումը:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

23.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ